ՀՀ արդարադատության նախարարի
պաշտոնակատար պարոն Արտակ Զեյնալյանին
14.01.2019

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Զեյնալյան,

2016 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունում մշակվել եւ քննարկվում էին «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում եւ մի շարք այլ կապակցված օրենքներում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին օրենքների նախագծերը, ապա նաեւ՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը: Առաջարկված մի շարք նոր կարգավորումների վերաբերյալ քաղաքացիական հասարակության դժգոհությունների արդյունքում նախագծի հանրային քննարկումները դադարեցվեցին:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել.

1. Ի՞նչ կարգավիճակ ունի 2016 թվականին մշակված եւ շրջանառված՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ նոր օրենքի վերոնշյալ նախագիծը:
2. Նախատեսվու՞մ է արդյոք վերսկսել այդ նախագծի շուրջ քննարկումները:

Կանխավ շնորհակալ ենք՝

Շուշան Դոյդոյան
ԻԱԿ նախագահ

Աշոտ Մելիքյան
ԽԱՊԿ նախագահ